ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 54(1), 2020 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 911.3:314

ՀՀ-ՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Անկախության անցած ժամանակահատվածում ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանները և շարունակվող արտագաղթն իրենց անմիջական ազդեցությունն են թողել բնակչության վերարտադրության վրա: Հոդվածում տրվել է 1990-ականներից հետո ՀՀ բնակչության վերարտադրության ընդհանրական վերլուծություն: Առանձնակի կարևորվել է 2010–2018 թթ. վերարտադրության միտումների, տարածքային տարբերությունների բացահայտումը և առկա հիմնախնդիրների մատնանշումը:

***Keywords*:** population reproduction, population dynamics, emigration, natural growth, problems.

Ներածություն: Ժամանակակից պայմաններում ՀՀ ռազմավարական նշանակության խնդիրների շարքում կարևորագույն դեր ունեն ժողովրդագրական գործընթացները՝ բնակչության թվաքանակի շարժընթացը, վերարտադրության առկա միտումները և երկրում ձևավորված ժողովրդագրական իրավիճակը: Դրանց շնորհիվ տեղի է ունենում բնակչության թվաքանակի, կազմի և կառուցվածքի փոփոխություններ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են թողնում երկրում բանակի համալրման, անհրաժեշտ քանակով աշխատուժի վերարտադրության, ազգային գենոֆոնդի պահպանման և զարգացման, կրթական և առողջապահական համակարգերի կատարելագործման և զարգացման, առկա տարաբնակեցման համակարգի պահպանման և այլ գործընթացների վրա:

Միայն վերջին 20 տարում (2000–2019 թթ.) ՀՀ մշտական բնակչության թվաքանակը ոչ միայն չի ավելացել, այլ նվազել է ավելի քան 261 հազարով (աղյ. 1), իսկ 1991 թ.-ից հետո՝ ավելի քան 609 հազարով [1]: ՀՀ մշտական բնակչության թվաքանակի այդպիսի նվազումը պայմանավորել են արտագաղթը և բնական հավելաճի նվազումը: 1992–2018 թթ.-ից ՀՀ-ից միգրացիայի մնացորդը կազմել է –1103,6 հազ., 2008–2018 թթ.-ին՝ –287,4 հազ. մարդ: Եթե 1991 թ. ՀՀ-ում բնակչության բնական հավելաճը կազմել է 54,4 հազ. մարդ, ապա հետագա տարիներին այն աստիճանաբար նվազել է (աղյ. 2): Ընդհանուր առմամբ 1992–2018 թթ. ՀՀ-ում բնակչության ընդհանուր հավելաճը՝ բացառությամբ 2012 թ.-ի, երբ այն կազմել է 5,5 հազ. մարդ, եղել է բացասական: ՀՀ-ում բնական հավելաճի նվազումը

* E-mail: a.potosyan@ysu.am

պայմանավորել են ծնելիության գործակցի նվազումը և մահացության գործակցի ավելացումը: 1991 թ.-ին ՀՀ-ում ծնելիության ընդհանուր գործակիցը կազմել է 21.6‰, մահացությանը՝ 6.5‰, իսկ 2018 թ.-ին՝ համապատասխանաբար՝ 12,3 և 8,7‰: Այսպիսով՝ 1991–2018 թթ.-ին ՀՀ-ում բնակչության բնական հավելաճի գործակիցը նվազել է մոտ 4,2 անգամ (15,1-ից՝ 3,6 ‰) [1]:

Աղյուսակ 1

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ գյուղական եվ քաղաքային բաշխվածության եվ սեռի (1995-2019թթ.)

Տարի-ներ	Ընդամենը տարեսկզբի դրությամբ	Այդ թվում		%-ով ընդհանուրից		Քաղա-քային	Գյուղա-կան	%-ով ընդհանուրից	
		տղամար-դիկ	կանայք	տղամար-դիկ	կանայք			քաղա-քային	գյուղա-կան
1995	3260,3	1535,8	1724,5	47,1	25,9	2166,4	1013,9	66,4	33,6
2000	3226,9	1545,7	1681,2	47,9	52,1	2095,8	1131,1	64,9	35,1
2001	3215,3	1543,1	1672,2	48,0	52,0	2076,3	1139,0	64,6	35,4
2005	3156,0	1515,1	1640,9	48,0	52,0	2020,9	1135,1	64,0	36,0
2010	3055,2	1465,8	1589,4	48,0	52,0	1941,5	1113,7	63,5	36,5
2011	3018,9	1448,1	1570,8	48,0	52,0	1911,3	1107,6	63,3	36,7
2015	3010,6	1439,1	1571,5	47,8	52,2	1912,9	1097,7	63,5	36,5
2019	2965,3	1401,8	1563,5	47,3	52,7	1894,9	1070,4	63,9	36,1

Չնայած անցած տարիների ընթացքում ՀՀ մշտական բնակչության թվաքանակի նվազումն առավելապես պայմանավորված է եղել միգրացիայի բացասական մնացորդով [1], սակայն այդ տարիներին ՀՀ բնակչության բնական հավելաճի ցուցանիշի կտրուկ նվազումը ևս նպաստել է այդ գործընթացին:

Թեև 2018–2019 թթ.-ին 2013–2017 թթ.-ի համեմատությամբ ՀՀ-ում դիտվել է բնակչության միգրացիայի մնացորդի որոշակի նվազում (2015 թ.-ին՝ –25,9, 2018 թ.՝ –18,2, 2019 թ.-ին՝ –16,0), սակայն բնական հավելաճի շարունակվող ցածր ցուցանիշը դեռևս չի ապահովում ՀՀ բնակչության թվի ավելացում (2019 թ.-ին՝ 2018 թ.-ի համեմատությամբ այն նվազել է 7,4 հազարով):

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առաջիկա տարիներին բնակչության թվաքանակի ավելացումը կարող է տեղի ունենալ միգրացիայի դրական մնացորդի և հատկապես՝ բնական հավելաճի ցուցանիշի ավելացման շնորհիվ:

Սույն հոդվածում խնդիր ենք դրել վերլուծել և բացահայտել ՀՀ բնակչության վերարտադրության տարածաժամանակային առանձնահատկությունները, տարածքային տարբերությունները և առկա հիմնախնդիրները: Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ՀՀ կառավարությանը և մարզային իշխանությունների համապատասխան մարմիններին իրականացնել գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, տարածաշրջանային և հասցեական ժողովրդագրական քաղաքականություն, որոնք կնպաստեն ՀՀ-ում բնակչության թվաքանակի ավելացմանը և դրա հետ կապված մի շարք խնդիրների լուծմանը:

Հետազոտության սկզբնաղբյուրները և մեթոդները: Հետազոտության համար նյութ են հանդիսացել ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչների, ծնելիության և մահացության վերաբերյալ 1991–2018 թթ.-ի բացարձակ և հարաբերական ցուցանիշները: Առավել կարևորվել է 2010–2018 թթ.-ի ՀՀ բնակչության վերարտադրության տարածաժամանակային վերլուծությունը,

առկա հիմնախնդիրների բացահայտումը: Այսպիսի վերլուծության համար օգտագործվել են ՀՀ բոլոր քաղաքների և նախկին վարչական շրջանների (տարածաշրջանների) գյուղական բնակչության վերարտադրության վերաբերյալ բացարձակ ցուցանիշները [2]: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և համեմատական աշխարհագրական մեթոդները:

Աղյուսակ 2

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները (1985–2018 թթ.)

Տարի-ներ	ՀՀ-ում			Պրոմիլներով			Քաղաքային բնակչություն			Պրոմիլներով			Գյուղական բնակչություն			Պրոմիլներով		
	ծն.	մահ.	բ/հ	ծն.	մահ.	բ/հ	ծն.	մահ.	բ/հ	ծն.	մահ.	բ/հ	ծն.	մահ	բ/հ	ծն.	մահ.	բ/հ
1986	81192	19410	61782	24,0	5,7	18,3	50124	11936	38188	21,8	5,2	16,6	31068	7474	23594	28,7	6,9	21,8
1995	48960	24842	24118	15,0	7,6	7,4	29131	16763	12368	13,5	7,8	5,7	19829	8079	11750	18,1	7,4	10,7
2002	32229	25554	6675	10,1	8,0	2,1	20804	16737	4067	10,1	8,1	2,0	11425	8817	2608	10,0	7,7	2,3
2010	44825	27921	16904	14,7	9,2	5,5	28263	17838	10425	14,6	9,2	5,4	16562	10083	6479	14,9	9,1	5,8
2014	43031	27714	15317	14,3	9,2	5,1	27874	17647	10227	14,6	9,2	5,4	15157	10067	5090	13,8	9,2	4,6
2017	37700	27157	10543	12,6	9,1	3,5	24611	17418	7193	13,0	9,2	3,8	13089	9739	3350	12,1	9,0	3,1
2018	35574	25751	10823	12,3	8,7	3,6	24259	16687	7572	12,8	8,8	4,0	12315	9064	3251	11,5	8,5	3,0

Հետազոտության արդյունքների վերլուծություն: 1986 թ.-ի համեմատությամբ 2018 թ.-ին ՀՀ բնակչության ծնելիության բացարձակ ցուցանիշը նվազել է 2,2 անգամ (աղյ. 2): Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում մահացության բացարձակ ցուցանիշն ավելացել է ավելի քան 1,3 անգամ, ընդ որում՝ 1986 թ.-ի համեմատությամբ 2018 թ.-ին բնակչության բացարձակ թիվը պակաս է 389 հազարով (աղյ. 1): Մահացության բացարձակ թվի ավելացումը պայմանավորված է բնակչության սեռատարիքային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններով՝ 1986–2018 թթ.-ին տարիքային հիմնական խմբերում մեծահասակների թվի ավելացումով և սոցիալական այլ գործոններով: Նշված տարիներին հանրապետությունում ծնելիության ընդհանուր գործակիցը նվազել է ավելի քան 1,9, իսկ մահացության ընդհանուր գործակիցն ավելացել է 1,5 անգամ: Այդ ամենի պատճառով ՀՀ-ում 1986–2018 թթ.-ի բնակչության բնական հավելաճի գործակիցը նվազել է ավելի քան 5, իսկ 1995 թ.-ի համեմատությամբ՝ ավելի քան 2 անգամ (աղյ. 2):

1986–2018 թթ. ՀՀ-ում բնակչության ծնելիության բացարձակ ցուցանիշի առավել մեծ չափով (2,5 անգամ) նվազում ունեցել է գյուղական բնակչությունը: Այդ ընթացքում ՀՀ քաղաքային բնակչության մահացության բացարձակ ցուցանիշն ավելացել է 1,4 անգամ, իսկ գյուղական բնակչությունը՝ 1,2 անգամ: Արդյունքում՝ ՀՀ քաղաքային բնակչության բնական հավելաճի ընդհանուր գործակիցը 2018 թ.-ին 1986 թ-ի համեմատությամբ նվազել է ավելի քան 4,1, իսկ 1995 թ.-ի համեմատությամբ՝ 1,4 անգամ (աղյ. 2): Գյուղական բնակչության համար պատկերն հետևյալ է. 1986–2018 թթ. բնական հավելաճը նվազել է 7,3, իսկ 1995–2018 թթ.-ին՝ 3.6 անգամ:

Գիտա-գործնական առումով առանձնակի կարևորություն և նշանակություն ունի ՀՀ բնակչության վերարտադրության վերլուծությունը, տարածքային տարբերությունների, առկա միտումների և հիմնախնդիրների բացահայտումը հատկապես վերջին տարիների համար: 2010–2018 թթ. ՀՀ-ում տեղի է ունեցել ծնելիության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշների կայուն կերպով նվազում (աղյ. 2): Բնական հավելաճի գործակիցն այդ ընթացքում նվազել է ավելի քան 1,5 անգամ (5,5-ից՝ 3,6‰):

Աղյուսակ 3

ՀՀ քաղաքների բնակավայրերի բնական շարժի ցուցանիշները (2010–2018 թթ., ‰-ով)

Քաղաքներ	2010 թ.			2018 թ.		
	ծն.	մահ.	բ/h	ծն.	մահ.	բ/h
Երևան	14,0	8,2	5,8	13,2	7,9	5,3
Աշտարակ	13,0	10,0	3,1	15,2	12,8	2,4
Ապարան	17,1	6,2	10,9	10,7	9,3	1,3
Թալին	16,3	10,0	6,3	17,2	11,9	5,3
Արտաշատ	15,1	7,5	7,6	16,2	11,1	5,1
Արարատ	10,4	4,1	6,3	9,9	5,9	4,0
Վեդի	16,0	9,4	6,6	23,2	8,0	15,1
Մասիս	12,5	6,5	6,1	15,8	7,7	8,1
Արմավիր	13,4	9,0	4,5	14,0	10,7	3,3
Մեծամոր	18,8	6,3	12,5	10,7	6,5	4,2
Վաղարշապատ	10,9	8,0	2,8	11,4	9,8	1,6
Գավառ	12,7	9,2	3,5	13,4	10,9	2,5
Ճամբարակ	12,3	7,8	4,5	9,5	10,7	–1,2
Մարտունի	13,3	8,8	4,5	15,2	8,1	7,1
Սևան	14,0	8,3	5,6	12,1	9,4	2,7
Վարդենիս	13,5	9,3	4,3	10,6	9,5	1,0
Վանաձոր	13,9	10,5	3,4	10,7	12,7	–2,0
Ալավերդի	15,1	12,7	2,4	11,4	14,8	–3,4
Ախթալա	11,7	9,2	2,5	8,0	8,0	0,0
Թումանյան	8,3	16,7	–8,3	12,7	16,0	–3,3
Շամլուղ	18,6	11,4	7,1	6,7	26,7	–20,0
Սպիտակ	13,8	8,0	5,9	9,9	8,7	1,3
Ստեփանավան	11,9	12,0	–0,1	11,1	12,4	–1,3
Տաշիր	13,3	9,9	3,4	11,9	11,1	0,8
Հրազդան	13,4	7,2	6,1	13,4	9,7	3,7
Չարենցավան	13,3	8,6	4,7	13,8	10,3	3,5
Ծաղկաձոր	6,9	7,5	–0,6	15,8	11,7	4,2
Աբովյան	16,5	8,6	7,9	16,2	9,7	6,5
Բյուրեղավան	18,1	7,8	10,4	12,2	8,6	3,6
Եղվարդ	16,6	8,1	8,5	14,9	10,6	4,3
Նոր Հաճն	12,9	7,4	5,5	9,1	6,8	2,4
Գյումրի	12,5	11,4	1,1	11,7	11,7	0,1
Մարալիկ	18,2	8,7	9,5	14,1	10,2	3,9
Արթիկ	15,9	9,7	6,2	11,2	8,3	2,9
Կապան	9,1	7,2	1,8	8,6	7,3	1,4
Քաջարան	11,6	7,4	4,2	10,6	7,6	3,0
Գորիս	12,6	7,6	5,0	14,6	9,3	5,2
Մեղրի	12,9	9,8	3,1	10,4	7,1	3,3
Ագարակ	13,1	6,7	6,5	7,4	9,1	–1,6
Սիսիան	11,4	7,6	3,8	11,2	8,4	2,8
Դաստակերտ	6,7	6,7	0,0	6,7	10,0	–3,3
Եղեգնաձոր	12,6	8,9	3,7	13,2	9,2	4,0
Վայք	11,7	7,5	4,2	15,8	6,1	9,6
Ջերմուկ	12,9	8,5	4,4	9,3	7,9	1,4
Իջևան	11,5	7,4	4,1	9,9	6,2	3,7
Դիլիջան	13,0	11,0	2,0	8,3	8,9	–0,5
Նոյեմբերյան	9,8	8,5	1,3	16,0	9,8	6,2
Այրում	13,3	9,2	4,2	11,1	10,0	1,1
Բերդ	11,4	10,2	1,2	6,8	11,7	–4,9

Վերջին ութ տարիներին ՀՀ քաղաքային բնակչության ծնելիության ընդհանուր գործակիցը նվազել է 1,8%-ով, իսկ բնական հավելաճը՝ 1,4‰-ով: Գյուղական բնակչության ծնելիության գործակիցը նվազել է 3,4‰-ով, իսկ բնական հավելաճը՝ 2,8‰-ով: Հարկ է նկատել մի առանձնահատուկ փաստ, որ 2011–2018 թթ.-ը ՀՀ-ում քաղաքային բնակչության ծնելիության ընդհանուր գործակիցն ավելի բարձր է եղել, քան գյուղական բնակչության համապատասխան ցուցանիշը: Վերջինիս հետևանքով այդ տարիներին ՀՀ-ում քաղաքային բնակչության բնական հավելաճի գործակիցը գերազանցել է գյուղական բնակչության համապատասխան ցուցանիշին: Սա կարելի է համարել աննախադեպ երևույթ ՀՀ բնակչության վերարտադրության երկարամյա ժամանակահատվածի ընթացքում:

Աղյուսակ 4

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների (2010–2018 թթ., ‰-ով)

Տարածաշրջաններ	2010 թ.			2018 թ.		
	ծն.	մահ.	բ/հ	ծն.	մահ.	բ/հ
Աշտարակի	15,3	9,4	5,9	12,0	8,7	3,3
Ապարանի	15,9	7,3	8,6	9,7	8,8	0,8
Արագածի	17,6	7,0	10,5	11,4	7,3	4,1
Թալինի	14,5	8,6	5,8	10,2	8,1	2,2
Արտաշատի	14,5	9,0	5,5	11,9	9,1	2,8
Արարատի	15,0	7,9	7,1	12,3	7,7	4,6
Մասիսի	14,1	9,4	4,7	10,6	8,8	1,8
Արմավիրի	15,3	8,6	6,7	11,6	6,9	4,7
Էջմիածնի	14,7	7,8	6,9	10,6	7,3	3,2
Բաղրամյանի	17,2	6,7	10,5	12,5	7,1	5,4
Գավառի	14,1	8,2	5,9	11,3	7,0	4,2
Կրասնոսելսկի	11,5	13,8	–2,2	8,6	10,8	–2,2
Մարտունու	16,4	6,4	10,0	12,2	6,0	6,3
Սևանի	15,2	7,4	7,9	10,8	6,8	4,0
Վարդենիսի	12,7	8,6	4,2	10,5	8,3	2,3
Գուգարքի	11,8	10,3	1,4	10,9	11,9	–1,0
Թումանյանի	10,7	11,2	–0,5	10,1	11,7	–1,6
Սպիտակի	13,6	8,9	4,8	14,4	8,2	6,2
Ստեփանավանի	12,1	11,3	0,8	13,0	10,8	2,2
Տաշիրի	13,6	8,0	5,5	13,3	12,2	1,1
Հրազդանի	15,0	7,6	7,3	13,9	9,0	4,9
Աբովյանի	13,4	7,6	5,8	10,2	8,0	2,2
Նաիրիի	12,1	8,0	4,0	9,3	7,6	1,7
Ախուրյանի	13,7	8,7	5,0	15,7	9,6	6,0
Ամասիայի	12,8	6,8	6,1	10,2	6,0	4,2
Աշոցքի	16,2	8,7	7,5	11,1	10,2	0,9
Անիի	16,9	8,0	9,0	12,1	6,8	5,3
Արթիկի	15,5	8,1	7,4	11,6	7,6	4,0
Կապանի	9,3	13,7	–4,5	7,3	13,1	–5,7
Գորիսի	13,5	9,3	4,2	11,6	8,0	3,6
Մեղրու	9,2	12,8	–3,6	11,9	12,4	–0,5
Սիսիանի	12,5	9,2	3,2	10,4	9,8	0,6
Եղեգնաձորի	11,9	8,9	3,0	10,4	9,1	1,4
Վայքի	14,1	9,5	4,5	10,9	8,5	2,4
Իջևանի	15,8	9,1	6,8	12,2	9,0	3,2
Դիլիջանի	15,3	10,2	5,2	13,3	11,4	1,9
Նոյեմբերյանի	12,1	8,4	3,7	11,6	11,8	–0,3
Տավուշի	9,7	14,7	–5,0	8,0	15,2	–7,2

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2010–2018 թթ.-ի ՀՀ քաղաքային բնակավայրից ընդամենը 10-ում է տեղի ունեցել բնակչության բնական հավելաճի գործակցի ավելացում: Այդ առումով առավել բարձր ցուցանիշներ ունեն Վեդին, Ծաղկաձորը, Վայքը, Նոյեմբերյանը (աղյ. 3): ՀՀ տասը քաղաքներում 2018 թ.-ի ցուցանիշներով բնական հավելաճը եղել է բացասական: Եթե 2010 թ. Լոռու մարզի ութ քաղաքներից բնական հավելաճի բացասական ցուցանիշներ են ունեցել Թումանյանը (–8,3‰) և Ստեփանավանը (–0,1‰), ապա 2018 թ.-ին դրանց ավելացել են նաև մարզկենտրոն Վանաձորը (–2‰), Ալավերդին (–3,4‰), Շամլուղը (–20‰): Մարզի քաղաքներից միայն Սպիտակում և Տաշիրում 2018 թ.-ին գրանցվել է բնական հավելաճի դրական ցուցանիշ (աղյ. 3): Ախթալայում բնական հավելաճը կազմել է զրո:

ՀՀ քաղաքներից բնական հավելաճի բացասական ցուցանիշներ են ունեցել նաև Ագարակ, Դաստակերտ, Դիլիջան, Բերդ և Ճամբարակ քաղաքները: Գյումրիում բնական հավելաճի ցուցանիշը 2018 թ.-ին կազմել է ընդամենը 0,1‰: Մարզի մյուս երկու քաղաքներում բնական հավելաճի գործակիցները 2018 թ.-ին եղել են դրական, սակայն 2010 թ.-ի համեմատությամբ Մարալիկում այն նվազել է 5,6, Արթիկում՝ 3,3‰-ով:

ՀՀ-ում բնակչության թվով 4–7-րդ համարվող Վաղարշապատ, Հրազդան, Աբովյան և Կապան քաղաքներում 2010 թ.-ի համեմատությամբ 2018 թ.-ին բնակչության հավելաճի գործակիցը նվազել է (աղյ. 3): Նմանատիպ պատկեր է նաև մարզկենտրոններ Աշտարակում, Արտաշատում, Արմավիրում, Գավառում, Իջևանում, ինչպես նաև բնակչության թվով նշվածների մոտ Արարատում, Սևանում, Չարենցավանում, Սիսիանում:

Քննարկվող ժամանակաշրջանում Երևանում ևս դիտվել է բնակչության բնական հավելաճի ցուցանիշի նվազում՝ 0,5‰: Այդ է պատճառը, որ մայրաքաղաքի բնակչության բնական հավելաճի գործակիցը 2018 թ.-ի դրությամբ ՀՀ համապատասխան միջինից ավելի է 1,7, իսկ ՀՀ քաղաքային բնակչության հավելաճի միջին ցուցանիշից՝ 1,3 պրոմիլով:

ՀՀ նախկին 37 վարչական շրջանների կամ տարածաշրջանների գյուղական բնակչության վերարտադրության 2010–2018 թթ.-ի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ բացառությամբ Սպիտակի, Ստեփանավանի, Ախուրյանի և Մեղրու տարածաշրջանների մնացած 33 տարածաշրջաններում տեղի է ունեցել գյուղական բնակչության բնական հավելաճի գործակցի նվազում (աղյ. 4): Ընդ որում, Մեղրու տարածաշրջանում թեև 2010 թ.-ի համեմատությամբ կա հավելաճի ավելացում, սակայն և՛ 2010 թ.-ին (–3.6‰) և՛ 2018 թ.-ին (–0.5‰) այն եղել է բացասական: Եթե 2010 թ.-ին ՀՀ-ում գյուղական բնակչության հավելաճի բացասական ցուցանիշ ունեցել են Կրասնոսելսկի, Թումանյանի, Մեղրու, Կապանի և Տավուշի տարածաշրջանները, ապա 2018 թ.-ին դրանց ավելացել են նաև Նոյեմբերյանի և Գուգարքի տարածաշրջանները: Հարկ է նկատել, որ այդ յոթ տարածաշրջաններից հինգն իրենց կարգավիճակով համարվում են սահմանամերձ տարածքներ կամ տարածաշրջաններ: Առավել մտահոգիչ պետք է համարել Կապանի և Տավուշի տարածաշրջանների գյուղական բնակչության վերարտադրության առկա պատկերը (Կապանի տարածաշրջանում բնական հավելաճի գործակիցը 2010 թ.-ի –4.5-ից 2018 թ.-ին դարձել է –5,7‰, իսկ Տավուշի տարածաշրջանում՝ –5,0-ից՝ –7,2‰):

Քննարկվող ժամանակաշրջանում գյուղական բնակչության բնական հավելաճի նվազում է դիտվել ոչ միայն սահմանամերձ տարածաշրջաններում, այլ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի բոլոր 18 տարածաշրջաններում: ՀՀ 33 տարածաշրջաններում գյուղական բնակչության հավելաճի նվազումն առավելապես պայմանավորված է 2010 թ.-ի համեմատությամբ 2018 թ.-ին ծնելիության ցուցանիշի նվազումով: Առանձին տարածաշրջաններում այդ ցուցանիշը նվազել է 4–5 պրոմիլով, Արագածի տարածաշրջանում՝ 6,2‰-ով: Տասնվեց տարածաշրջաններում 2010 թ.-ի համեմատությամբ 2018 թ.-ին տեղի է ունեցել գյուղական բնակչության մահացության ընդհանուր գործակցի ավելացում, որը բացատրվում է ինչպես այդ տարածաշրջանների գյուղական բնակչության բացարձակ թվի նվազումով, այնպես էլ բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների համեմատաբար բարձր տեսակարար կշռով: ՀՀ-ում գյուղական բնակչության մահացության գործակցի առավել բարձր ցուցանիշներ ունեն Տավուշի (15,2), Կապանի (13,1), Մեղրու (12,4), Նոյեմբերյանի (11,8), Գուգարքի (11,9) և Տաշիրի (12.2) տարածաշրջանները (աղյ. 4): Դրանցից առաջին չորսը սահմանամերձ են:

Եզրակացություն:

1. Անկախության անցած ժամանակաշրջանում ՀՀ բնակչության թվաքանակի շարժընթացի վրա՝ բացի արտագաղթից (միգրացիայի բացասական մնացորդից), իր ազդեցությունն է թողել նաև այդ տարիներին բնական հավելաճի ցուցանիշի կտրուկ նվազումը: Այն 1991 թ.-ի համեմատությամբ 2018 թ.-ին նվազել է ավելի քան 4 անգամ:

2. Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է միգրացիայի բացասական մնացորդի ցուցանիշի նվազում, սակայն բնակչության բնական հավելաճի ցածր ցուցանիշի պատճառով դեռևս շարունակվում է ՀՀ մշտական բնակչության թվի նվազման երևույթը:

3. Անկախության անցած տարիներին ՀՀ բնակչության ծնելիության ցուցանիշի նվազման, մահացության ցուցանիշի ավելացման, արտագաղթի և բնակչության տարիքային բնականոն կառուցվածքի խախտման պատճառով վերջին մոտ երկուսուկես տասնամյակում (1995 թ.-ից հետո) բնակչության բնական հավելաճի գործակիցը նվազել է ավելի քան երկու անգամ, որն առավել մեծ չափով տեղի է ունեցել գյուղական բնակչության շրջանում:

4. Միայն վերջին ութ տարիներին (2010–2018 թթ.) ՀՀ-ում բնական հավելաճի գործակիցը նվազել է ավելի քան 1,5 անգամ, որը քաղաքային բնակչության համար կազմել է 1,3, գյուղական բնակչության համար՝ ավելի քան 1,9 անգամ:

5. Չնայած այն հանգամանքին, որ 2018 թ.-ին 2010 թ.-ի համեմատությամբ ՀՀ տաս քաղաքներ ունեցել են բնական հավելաճի գործակցի ավելացում, մնացած 39-ում (բացառությամբ երկուսի) այն նվազել է: Սահմանամերձ տարածքներում գտնվող Ագարակ, Դաստակերտ, Դիլիջան, Բերդ և Ճամբարակ քաղաքներում, մարզկենտրոն Վանաձորում և մարզի չորս այլ քաղաքներում բնական հավելաճի գործակիցը եղել է բացասական:

6. Անկախության անցած տարիներն, մասնավորապես 2010–2018 թթ.-ին բնակչության ծնելիության գործակցի նվազման, մահացության գործակցի ավելացման և բնական հավելաճի գործակցի նվազման երևույթը, առանձին

բացառություններով, տեղի է ունեցել ՀՀ բոլոր տարածաշրջաններում, քաղաքային և գյուղական բնակավայրերում: 2018 թ.-ի դրությամբ այդ երևույթն առավել սուր և անցանկալի դրսևորումներ ուներ սահմանամերձ տարածաշրջանների մեծ մասում և սահմանամերձ մի շարք քաղաքային բնակավայրում, Վանաձոր քաղաքում և Լոռու և Սյունիքի մի քանի քաղաքներում:

7. Բնակչության հավելաճի առավել կայուն ցուցանիշով առանձնանում է Երևանը: Այստեղ թեև 2010 թ.-ի համեմատությամբ բնական հավելաճի գործակիցը նվազել է 0,5‰-ով, սակայն 2018 թ.-ի դրությամբ այն բարձր է ինչպես ՀՀ, այնպես էլ քաղաքային բնակչության միջին ցուցանիշից:

8. ՀՀ նախկին վարչական շրջանների գերակշիռ մասում բնակչության ծնելիության նվազման, իսկ տարածաշրջաններից 16-ում՝ մահացության գործակցի ավելացման պատճառով 2010–2018 թթ.-ին տեղի է ունեցել բնական հավելաճի գործակցի կայուն կերպով նվազում (5,8-ից՝ 3.0‰):

Առաջարկություններ

1. ՀՀ կառավարությունը, մարզային իշխանությունները և տեղական ինքնակառավարման մարմինները մշակվող սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում առաջնային կարևորություն պետք է տան երկրում առկա ժողովրդագրական իրավիճակին, մասնավորապես՝ բնակչության վերարտադրության գործընթացներում ոչ ցանկալի միտումների կանխմանն ուղղված միջոցառումներին:

2. Պետք է մշակվեն և իրականացվեն համալիր ծրագրեր, որոնք կնպաստեն ինչպես ՀՀ-ի մասշտաբով, այնպես էլ առանձին տարածաշրջաններում, քաղաքներում և գյուղերում բնակչության վերարտադրության բնականոն գործընթացների վերականգնմանը և զարգացմանը: Այդպիսի ծրագրերի գլխավոր թիրախը պետք է լինի ՀՀ մասշտաբով ընդլայնված վերարտադրության ապահովումը:

3. Երկրում տարվող ծնելիության համընդհանուր խրախուսման քաղաքականության համատեքստում առանձնակի կարևորություն և արտոնություններ պետք է տրվեն հատկապես սահմանամերձ տարածաշրջանների քաղաքային և գյուղական բնակավայրերին, որոնք ունեն բնական հավելաճի բացասական կամ դրական շատ փոքր գործակիցներ:

Ստացվել է՝ 13.01.2020
Գրախոսվել է՝ 24.02.2020
Հաստատվել է՝ 10.03.2020

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՀ ժողովրդագրական ժողովածու 2019*. https://armstat.am/am/?nid=82&id=2225
2. *Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ*: Վիճակագրական տեղեկագիր: Եր. (2010):
3. *ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները*: Վիճակագրական տվյալների բազաներ. https://www.armstat.am/am/?nid=209

А. А. ПОДОСЯН

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ВОСПРОИЗВОДСТВА НАСЕЛЕНИЯ В РА, ТЕРРИТОРИАЛЬНЫЕ РАЗЛИЧИЯ И СУЩЕСТВУЮЩИЕ ПРОБЛЕМЫ

Резюме

Неблагоприятные социально-экономические условия, сложившиеся в Армении после обретения независимости, и продолжающаяся эмиграция оказали непосредственное влияние на воспроизводство населения в стране. В статье дается обобщенный анализ воспроизводства населения Армении после 1990 гг. Особое внимание уделено выявлению тенденций и территориальных различий воспроизводства населения за период 2010–2018 гг. и анализу существующих проблем.

A. H. POTOSYAN

POPULATION REPRODUCTION CONTEMPORARY TENDENCIES IN THE RA, TERRITORIAL DIFFERENCES AND CURRENT PROBLEMS

Summary

The difficult socio-economic conditions during post-independence period and continual emigration have had a direct impact on the reproduction of population in the RA. General analysis of population reproduction of the RA during post 1990s period is given in the article. Reproduction tendencies during 2010-2018, revealation of territorial differences and pointing current problems are especially highlighted.